600.0335.29.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

29 նոյեմբերի 2016 թվականի №335Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի №439Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՍՏԵԿ ԷՆԵՐԳՈ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի նոյեմբերի 17-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի «ՍՏԵԿ ԷՆԵՐԳՈ» փակ բաժնետիրական ընկերությանը «Սահակյան ՓՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №439Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ՍՏԵԿ ԷՆԵՐԳՈ» փակ բաժնետիրական ընկերության «Սահակյան ՓՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0525 լիցենզիայի պայմանների՝

   1) 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ը» բառերով.

   2) 6-րդ և 10-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 743 կՎտ հաշվարկային հզորությամբ «Սահակյան ՓՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:»,

«10. «Սահակյան ՓՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 1110 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ ՀՀՏՊ-6084810-2015, 700 կՎտ, 2015թ,
2) գեներատոր №1՝ ԱԳ 700.6300.50S10, 700 կՎտ, 2015թ,
3) հիդրոտուրբին №2՝ ՀՀՏՊ-6084810-2015, 410 կՎտ, 2015թ,
4) գեներատոր №2՝ ԱԳ 410.6300.50S10, 410 կՎտ, 2015թ:»:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը ամբողջությամբ ազատել 2016 թվականի օգոստոսի 15-ի №652-6504 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված №ՀԲԵՆ16/94-01 երաշխիքի համաձայն ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆՊԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
29 նոյեմբերի 2016թ.
ժամը 14[00]